ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունվարի 2016 թվականի թիվ 9 - Ա

ՍԵՐԳԵՅ ԹԱՀԻՐՅԱՆԻՆ «ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՀՈՎԻՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 198-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով և 16-րդ հոդվածի 1-ին մասով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1/ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. մարտի 4-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության /նշանակման/ կարգը հաստատելու մասին» N 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետով, հիմք ընդունելով «ՀՀ Տավուշի մարզի Լուսահովիտի հիմնական դպրոց» ՊՈԱԿ կառավարման խորհրդի 2016թ. հունվարի 19-ի եզրակացությունը և Ս.Թահիրյանի դիմումը՝

որոշում եմ.

1. 2016 թվականի հունվարի 25 -ից Սերգեյ Մարտիրոսի Թահիրյանին նշանակել «ՀՀ Տավուշի մարզի Լուսահովիտի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնում և կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով :

2.ՈՒԺԸ կորցրած ճանաչել ՀՀ Տավուշի մարզպետի 2015 թվականի հոկտեմբերի 14-ի «Սերգեյ Թահիրյանին «ՀՀ Տավուշի մարզի Լուսահովիտի հիմնական դպրոց» ՊՈԱԿ գործադիր տնօրենի պաշտոնակատար նշանակելու մասին» թիվ 198-Ա որոշումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ԱԲՈՎՅԱՆ

2016թ. հունվարի 25
ք.Իջևան